ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИА

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АРЕВАШАТ

հեռ. 098443308 тел. 098443308

Էլ.փոստ arevashatgyux@mail.ru

թիվ __119__

03. 06. 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիս ամսվա ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Արևաշատի համայնքի ղեկավար՝ Ս.Գևորգյան

Կատարող
Ն. Արզումանյան
Հեռ.+374-99-96-21-20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Երևանյան խճուղի թիվ 16
Հեռախոս 098443308
Էլ փոստ arevashatgyux@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

30 մայիսի 2019 թվականի թիվ -09-

Համաձայն << ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019թ. հիմնական միջոցառումների պլան»-ի 8.2.2 կետի պահանջների, իմ ղեկավարությամբ, Արևաշատ համայնքում 14.06.2019թ. անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն <<ՈՒժեղ երկրաշարժի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը>> թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հովիկ Բաբլոյանին:
2. ՈՒսումնավարժությունում ներգրավվել՝

- համայնքի ղեկավար կազմին,
- համայնքի ԱԻ հանձնաժողովին,
- համայնքի տարահանման հանձնաժողովին,
- համայնքի կազմավորումների հրամանատարներին.

3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին.

- Համագործակցել Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի կազմման հարցերում:
- Մինչև 03.06.2019թ. մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը:
- Ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 10.06.2019թ. ներկայացնել հաստատման:

- Կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի:
- Ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 12.06.2019թ.:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԱՐԵՎԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

2019 թվականի մայիսի «30»-ի
գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ

հեռ. 098443308
Էլ.փոստ arevashatgyux@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

02. Մայիսի 2019 թ N 8-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետի դրույթներով կարգադրում եմ `

1.Ստեղծել հանձնաժողով, որը կզբաղվի համայնքային ենթակայության փողոցների և ճանապարհների ներկա վիճակի ուսումնասիրության , պահպանման, շահագործման կազմակերպման աշխատանքներով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ /Հ. Բաբլոյանին/ հետևել աշխատանքների կատարման և կազմակերպման ընթացքին և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Սուսաննա Գևորգյան

2019թվականի 02.05
Համայնք Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՆԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ Մայիսի 02-Ի
թիվ 8-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ

Հանձնաժողովի նախագահ՝

1. Հովիկ Բաբլոյան համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

2. Պարգև Ստեփանյան - համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ
3. Զորիկ Սարգսյան –մշակույթի տան տնօրեն
4. Ռոբերտ Կարապետյան – համայնքի ավագանի (համաձայնությամբ)
5. Քերոբ Մխիթարյան – համայնքի բնակիչ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ arevashatgyux@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2019 թվականի 17-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 39 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի 3 ընտանիքների հատկացնել 90.000 հազար ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019 թվականի մայիսի 30-ի
գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019ԹՎԱԿԱՆԻ մայիսի 30-Ի
ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Մելինե Կարապետյան 30000
2. Սաթիկ Կարապետյան 30000
3. Ալինա Բոյախչյան 30000

Համայնքապետարանի
Աշխատակազմի քարտուղար՝ Արփենիկ Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
Երևանյան խճուղի թիվ 16
Հեռախոս 098443308
Էլ փոստ arevashatgyux@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

20 Մայիսի 2019 թվականի թիվ N 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԱՎԱՆԳԱՐԴ>> ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի Հայաստանի Հանրապետությունում շենքերի , շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգ հաստատելու մասին *N88* և 2017թվականի հունիսի 29-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին >> N757-Ն որոշումների և հիմք ընդունելով <<Ավանգարդ>>ՍՊԸ-ի տնօրենի գրավոր դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Փոփոխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի վարչական տարածքում գտնվող , <<Ավանգարդ>>ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 068-004 ծածկագրի 0,1073 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում առկա 126.6քմ մակերեսով շինության գործառնական նշանակությունը , այն դասելով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական օբյեկտների շարքը որպես գյուղարտադրամաս օգտագործելու համար անշարժ գույքի հասցեն թողնելով նույնը Ռաֆֆու փողոց .թիվ 8:
2. Աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

2019թվականի մայիսի «20»-ի
գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

«15» Մայիսի 2019թ. ԹԻՎ 15

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և/կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2389-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Արևաշատ համայնքի ավագանու 04.09.2006թ. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձերի համարակալման մասին» թիվ 5/1 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի համայնքում գտնվող 04-026-037-032 ծածկագրով քաղ. **Պերճ Միսակի Մկրտչյանին** պատկանող տնամերձ հողամասին տալ հետևյալ հասցեավորումը՝ Ա. Խաչատրյանի 19:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ _____ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
/ստորագրություն/ /անուն, ազգանուն/

2019թվականի Մայիսի «15»-ի

գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

հեռ. 098-44-33-08 тел. 098-44-33-08
Էլ. Հասցե. arevashatgyux@mail.ru

16 մայիսի 2019թ. ԹԻՎ_14_

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի բնակիչներ Շիրակ Սարգսյանը, Գառնիկ Սարգսյանը և Երազիկ Սարգսյանը դիմել են Արևաշատի համայնքապետարան սեփականության իրավունքով իրենց պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 1128249, տրված 03.11.2003թ./ 43.0 քառ.մ հողամասի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական փոխելու և Էրեբունի փողոցի թիվ 17 հասցեում գտնվող բնակելի տան ինքնակամ շենք-շինությունների (արտաքին մակերեսներ. բնակելի տուն՝ 70,5քմ, խանութ՝ 19.2քմ) օրինականացնելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում: Հաշվի առնելով Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի բնակիչներ Շիրակ, Գառնիկ և Երազիկ Սարգսյանների 2018 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Օրինական ճանաչել Շիրակ, Գառնիկ և Երազիկ Սարգսյաններին պատկանող Արևաշատ համայնքի, Էրեբունի փողոցի թիվ 17 հասցեում գտնվող 43.0 քմ հողամասի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական փոխելու և ինքնակամ կառուցված՝(արտաքին մակերես) բնակելի տուն 70,5քմ, խանութ 19.2քմ ճանաչել օրինական:
2. Հողամասի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական փոխելու և ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է.
   1.0քմ համար բնակելի տուն – 1700 ՀՀ դրամ / 1700դ. * 70.5քմ =119850 ՀՀ դրամ /
   1.0քմ համար խանութ – 3400 ՀՀ դրամ / 3400դ. * 19.2քմ = 65280 ՀՀ դրամ /
3. Ընդհանուր գումարը կազմում է 185130 ՀՀ դրամ : Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորման ստորաբաժանման կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ _____ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
/ստորագրություն/ /անուն, ազգանուն/

2019թվականի մայիսի 16

գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

հեռ. 098-44-33-08 тел. 098-44-33-08
Էլ. Հասցե. arevashatgyux@mail.ru

« 15» մայիսի 2019թ. ԹԻՎ_13_

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի բնակիչներ Բենիկ Կարապետյանը և Հասմիկ Կարապետյանը դիմել են Արևաշատի համայնքապետարան սեփականության իրավունքով իրենց պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 30082016-04-0027, տրված 30.08.2016թ./ 101.0 քառ.մ հողամասի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական փոխելու և Երևանյան խճուղի թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տան ինքնակամ շենք-շինությունների (արտաքին մակերեսներ. բնակելի տուն՝ 87.0քմ, խանութ՝ 76.0քմ, ծածկ՝ 19.3քմ, մեկ դուռ և մեկ պատուհան) օրինականացնելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում: Հաշվի առնելով Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի բնակիչներ Բենիկ և Հասմիկ Կարապետյանների 2018 թվականի սեպտեմբերի 10-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Օրինական ճանաչել Բենիկ և Հասմիկ Կարապետյաններին պատկանող Արևաշատ համայնքի, Երևանյան խճուղի թիվ 3 հասցեում գտնվող 101.0 քմ հողամասի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական փոխելու և ինքնակամ կառուցված՝(արտաքին մակերես) բնակելի տուն 87.0քմ, խանութ 76.0քմ, ծածկ 19.3քմ, մեկ դուռ և մեկ պատուհան ճանաչել օրինական:
2. Հողամասի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական փոխելու և ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է.

1.0քմ համար բնակելի տուն – 1700 ՀՀ դրամ / 1700դ. * 87.0քմ =147900 ՀՀ դրամ /
1.0քմ համար խանութ – 3400 ՀՀ դրամ / 3400դ. * 76.0քմ = 258400 ՀՀ դրամ /
1.0քմ համար ծածկ – 700 ՀՀ դրամ / 700դ. * 19.3քմ = 13510 ՀՀ դրամ /
1 դռան համար – 1700 ՀՀ դրամ / 1 * 1700դ. = 1700 ՀՀ դրամ /
1 պատուհանի համար – 1700 ՀՀ դրամ / 1 * 1700դ. = 1700 ՀՀ դրամ /

3. Ընդհանուր գումարը կազմում է 423210 ՀՀ դրամ : Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորման ստորաբաժանման կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ _____ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
/ստորագրություն/ /անուն, ազգանուն/

2019թվականի մայիսի 15

գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ arevashatgyux@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2019 թվականի 12-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 39-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի 2 ընտանիքների հատկացնել 70.000 հազար ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019 թվականի ապրիլի 29-ի
գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019ԹՎԱԿԱՆԻ ապրիլի 29-ի
ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Նարինե Գագոյի Օզմանյան 30000
2. Արտյոմ Հարոնի Ղազարյան 40000

Համայնքապետարանի
Աշխատակազմի քարտուղար՝ Արփենիկ Վարդանյան